


ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ



Կապոռա

Վամարանիոյ գլխաւոր քաղաքն էր Վապուա, որ առջի հիմնադիր ունեցաւ զՎապիս, զոր ամանք Միքիսեսի հայրը՝ ամանք ալ ընկերակիցը կը համարին։ Վիչ ժամանակէն այնչափ մեծցաւ ու հարստացաւ այս քաղաքը, որ սկսաւ երէրորդ հռոմէ կոչուիլ։

Պատմութեանց մէջ նշանաւոր է այս քաղաքը Մենիբաղայ Վաննէի հռչակաւոր պատերազմէն ետքը՝ հոս ձմերելովը, որուն աղետալի հետեանքը ասանկ կը համարուօտէ Վիւիոս։

«Յաղթութեամբն առ Վաննէալ՝ նըւաճեցան ազգք հզօրք ընդ ձեռամբ Մենիբաղայ, և յաւելաւ ՚ի նա մեծն Յունաստան՝ Տարենտեալ հանդերձ քաղաքաւ, և թողուն զհռովմայեցիս՝ վա-

զընջուց նիզակակիցք նոցա, յորոց մի յառաջնոցն էր Վապուա։ Քաղաքս այս՝ պտղաբերութեամբ երկրին և ՚ի բնէ տեղւոյն և խաղաղութեամբն, յոր ՚ի բազում ժամանակաց վայելէր, մեծացեալ էր յոյժ և զօրացեալ. և զեղխութիւն և փափկութիւն՝ կցորդք փարթամութեան, ՚ի ներքս սպրդեալ՝ ապականեալ էին զբարս քաղաքայնոցն, որ բնաւորաբար ձգէին ՚ի հեշտախառութիւն և ՚ի շուայտութիւն։ () Քաղաքս զայս ընտրեաց Մենիբաղ իւր ՚ի ձմրոց։ Միշտ զօրականք՝ սովորեալքն ՚ի տաժանաւոր վաստակս, որք աննկունք ՚ի մեծամեծ վտանգս և մշտայաղթք էին, ՚ի զեղխութենէ և ՚ի հեշտ ախտից պարտեցան, անսովորութեամբն

առաւել ևս շռայլեալ 'ի նոսա զանձինս :
Բայտ օրինակաւ կորով պատերազմի ընդարմացաւ 'ի նոսա , և զսակաւն զայն ճիպն յետ այնորիկ՝ խրախոյս առաջնոց յաղթութեանցն գործէր 'ի նոսա , և ոչ զի զօրութիւն ինչ գոյր նոցա : Արք 'ի չուել 'ի քաղաքէ անտի այլ յայլմէ լեալ էին . քանզի դատարկանձունք ուսեալք 'ի բնակարանս հանգրտեան , և կեցեալք 'ի յղփութեան , ոչ ևս կարող էին բերել զքաղց և զծարաւ , զտքնութիւն , զերկար ուղեգնացութիւն , և զայն ևս վաստակս մարտի , և ոչ լսել զօրավարին , և զինուորական կրթութեանց հպատակել , :

Ի իւրոս՝ Բննիբաղայ Ասպուլայի մէջ ձմերելը՝ զինուորական մեծ սխալմունք կը համարի , և Խտալիոյ տիրելու համար՝ պէտք էր որ , կ'ըսէ , Կաննէի պատերազմէն ետքը՝ մէկէն հռովմայ վըրայ արշաւեր՝ յաղթական բանակաւ .
“ Բանզի այնու , կ'ըսէ , յապաղեցոյց զյաղթութիւն , իսկ աստ վրիպակաւն՝ կորոյս 'ի սպառ զոյս յաղթութեան :
Ս'իով բանիւ՝ որպէս ասացն Սարկեղոս . Ար ինչ հռովմայեցիք առ Կաննեաւ , զնոյն կրեցին 'ի Ասպուլա Վարքեդոնացիք . անդ պատերազմականն նոցա արութիւն շիջաւ , և զինուորական կրթութեանց տենչ . անդ և փառք նոցա առաջինք բարձան , և պատրաստելոցն ակնկալութիւն : Բանզի յայնմ հետէ Վարքեդոնացւոցն իրք երթային և վատթարէին . որպէս այն թէ կուսակից խոհեմութեան բաղդն եղեալ , և յաջողութիւն պատերազմի դաշնաւորեալ ընդ հռովմայեցիս , :

Ասպուլա քաղաքը՝ Բննիբաղայ կուսակից ըլլալուն պատճառաւ՝ իր կործանումը փութացուց . վասն զի Փուլվիոս և Վրոդիոս բղեշխները նորէն տիրեցին , և անհաւատարմութեանը վըրէժն առին : Սակայն իրենցմէ շատ աւելի անգութ գտնուեցաւ Վենսերիկոս վանդալը , որ բնակչաց սոսկալի կոտորած մը ընելէն ետքը , քաղաքն ալ սրով և հրով կործանեց : Վերսէս պատրիկ հայկազունը՝ նորէն շինեց , բայց 841ին

Սարակինոսաց գունդ մը քաղաքին վրայ վազելով , բնակիչները ստիպեց որ մերձակայ լերան վրայ փախչելով ապաւինին : Սարբարոսաց ետ քաշուելէն քիչ ետքը՝ Նոգորատացիք տիրեցին . բայց տեսնելով թէ այնպիսի մեծ քաղաք մը պաշտպանելու բաւական ուժ չունին , գետին ափանց քով ուրիշ պզտի քաղաք մը շինեցին , ու անունը դրին Ասպուլա :

Հին քաղաքին մնացորդներէն հռչակաւոր է ամփիթէատրոնին մնացորդները , որուն պատկերն է մեր հոս դրածը : Ի՞նչ ձևովը և թէ բաղդով՝ հռովմայ Փլաւեան ամփիթէատրոնին կամ կողմէնին կը նմանի . վասն զի երկուքին մէջ ալ գերազանց մեծագործութիւն մը կը նկատես . և երկուքն ալ թէ բարբարոսաց և թէ արուեստաւորաց ձեռքէն շատ փասններ կրած . միայն թէ Ասպուլայի շէնքը շատ աւելի կրած է քան զհռովմէականը : Երկուքն ինքնութեան մեծ մասը նոր Ասպուլա քաղաքը շինուելուն համար դործածուած է , մէկ մասն ալ աւազի տակ թաղուած : Բմփիթէատրոնին առաջին կարգի սիւները տոսկանեան ճարտարապետութիւն շինուած էին , իսկ երկրորդ կարգինները դորական . ամէն մէկ կամարին քով՝ մէյմէկ աստուածոց կիսարձանք դրուած էին , որ իրենց ահագին մեծութեամբը և անարուեստ ճարտարութեամբ՝ շէնքին ուրիշ մասերուն հետ չէին համեմատեր :

Վազերթայէն ինչուան հինն Ասպուլա , կէս ժամուան ճամբայ է : Դամբուն վրայ այլ և այլ շիրիմներու մնացորդք կը տեսնուին , որ իրենց հնութեան ձևովը՝ Վեսարու ժամանակէն առաջ շինուած կ'երևնան . և վերջերս զանազան հին անօթներ գտնուեցան՝ վրանին այլ և այլ նկարներով , որոնք ժամանակին արուեստն ու ճարտարութիւնը կը ցուցնեն :

